НЕКРОЛОГ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՎՈՆԻ ՄՆՋՈՅԱՆ

Հանրապետության քիմիական հասարակայնությունը ծանր կորուստ կրեց: Կյանքի 78-րդ տարում վախճանվեց կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օնիկ (Հովհաննես) Լևոնի Մնջոյանը:

Օ.Լ.Մնջոյանը ծնվել է 1920թ., ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիկա-տեխնոլոգիական ֆակուլտետը: Մասնակցել է Հայրենական պատերազմին, պարգևատրվել մի շարք շքանշաններով: 1946 թվականից մինչև իր կյանքի վերջը Օ.Լ.Մնջոյանը բեղմնավոր գիտահետազոտական աշխատանք է կատարել ՀՀ ԳԱԱ Ա.Լ.Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում, անցնելով ավագ քիմիկոսի մինչև բաժնի վարիչի պաշտոնները: 1951թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1976թ.՝ դոկտորական ատենախոսությունները: Օ.Լ.Մնջոյանի գիտական աշխատանքները վերաբերվում են ացետիլսալիցիլի և նիկոտինի ածանցյալների սինթեզի և քիմիական միացությունների կառուցվածքի ու կենսաբանական ակտիվության կապի օրինաչափությունների պարզաբանմանը: Նրա կողմից առաջադրվել է ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների ստեղծման ուղղություն եթերների, ամիդների, կետոնների և թթուների ամինային ածանցյալների շարքերում, որոնք կիրառվում են բժշկության մեջ: Օ.Լ.Մնջոյանը հեղինակ է 450 գիտական աշխատանքների և հեղինակային իրավունքների:

Շնորհաշատ քիմիկոս, բացառիկ աշխատասեր գիտնական Օնիկ Լևոնի Մնջոյանի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում: